


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. օգոստոսին /վերլուծություն/


2003թ. օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 6388 գործարքներ, որոնք 2002թ. օգոստոսի համեմատ աճել են 24.2%-ով, իսկ 2003թ հուլիս համեմատ՝ նվազել 5.6%-ով:

2003թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների



ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2003թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2799 օտարման գործարքների 90.3%-ը կազմել են առուվաճառքները, 9.2%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 51.8%-ն արձանագրվել են Երևան քաղաքում, իսկ 55.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. օգոստոսին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 12.3%-ով, իսկ 2003թ. հուլիսի համեմատ նվազել է 4.6%-ով: 2003թ. օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի 1276 առուվաճառքի գործարքների 72.0%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. հուլիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.0%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ՝ 8.7%-ով:

2003թ. օգոստոսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. օգոստոսին համարժեք է 578.14 դրամի/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. օգոստոսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		օգոստոս 2003թ.	հուլիս 2003թ.	օգոստոս 2002թ.
Կենտրոն	250.0-970.0	391.7	388.3	287.0
Արաբկիր	200.0-550.0	294.3	284.3	181.0
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	181.8	177.3	113.0
Նոր-Նորք	115.0-240.0	141.0	133.4	105.0
Ավան	110.0-190.0	139.0	132.1	88.0
Էրեբունի	120.0-300.0	151.1	146.3	107.5
Շենգավիթ	110.0-250.0	150.8	145.2	109.5
Դավթաշեն	130.0-250.0	177.3	171.3	104.5
Աջափնյակ	120.0-220.0	156.2	146.1	100.5
Մալաթիա-Սեբաստիա	120.0-240.0	146.9	144.2	103.5
Նուբարաշեն	60.0-100.0	68.5	66.1	48.5
Երևան	60.0-970.0	181.7	175.9	122.5

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. օգոստոսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, հուլիսի համեմատ աճել են 3.3%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ 48.3%-ով:

2003թ. օգոստոսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 453 բնակարաններ, որոնց քանակը հուլիսի համեմատ աճել է 0.2%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ՝ 13.3%-ով:

2003թ. օգոստոսին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ.օգոստոսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			օգոստոս 2003թ.	հուլիս 2003թ.	օգոստոս 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.5	62.4	58.0
	Այաբան	18.0-40.0	27.2	27.2	25.6
	Թալին	18.0-40.0	25.1	25.0	21.9
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.5	54.4	52.3
	Մասիս	20.0-90.0	54.4	54.4	50.4
	Վեդի	20.0-45.0	31.6	31.6	29.1
	Արարատ	22.0-50.0	31.5	31.5	28.5
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	84.3	84.1	72.6
	Արմավիր	21.0-58.0	45.5	45.5	41.8
	Մեծամոր	17.0-50.0	30.8	30.7	29.0
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	30.5	29.6
	Գավառ	20.0-50.0	30.3	30.2	29.2
	Մարտունի	18.0-38.0	29.5	29.5	28.2
	Վարդենիս	10.0-21.0	17.2	17.1	16.4
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	60.9	60.8	57.5
	Ստեփանավան	20.0-48.0	33.2	33.2	28.8
	Մայիտակ	17.0-40.0	23.8	23.8	22.2
	Ալավերդի	15.0-40.0	25.4	25.4	23.0
	Տաշիր	15.0-28.0	19.3	19.3	18.1
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	83.9	83.8	76.8
	Նոր Հաճն	35.0-75.0	52.1	52.0	50.2
	Բյուրեղավան	15.0-45.0	35.2	35.2	32.5
	Եղվարդ	28.0-55.0	40.5	40.3	37.1
	Հրազդան	18.0-55.0	30.7	30.7	28.3
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.7	75.7	72.0
	Չարենցավան	13.0-55.0	31.1	31.0	28.3
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	71.7	71.6	61.2
	Արթիկ	17.0-45.0	25.2	25.2	23.3
	Մարալիկ	15.0-33.0	23.6	23.6	20.8
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.6	29.6	26.9
	Կապան	18.0-52.0	29.1	29.0	25.6
	Միսիան	17.0-37.0	27.5	27.5	25.0
	Մեղրի	18.0-40.0	25.1	25.1	21.9
	Քաջարան	13.0-30.0	18.4	18.4	16.3
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.3	35.2	31.0
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.8	46.8	45.0
	Զերմուկ	18.0-50.0	41.1	41.1	37.7

Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.2	36.1	31.7
	Իջևան	23.0-60.0	40.3	40.3	38.6
	Բերդ	15.0-43.0	29.2	29.2	27.1
	Նոյեմբերյան	21.0-45.0	26.7	26.7	24.7

2003թ. օգոստոսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները հուլիսի համեմատ աճել են 0.1%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ՝ 8.9%-ով:

2003թ. օգոստոսին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 363 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 98, մյուս մարզերում միասին վերցրած՝ 265: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 19.8%-ով, այդ թվում Երևան քաղաքում աճել է 4.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 26.8%-ով: 2003թ. հուլիսի համեմատ, առանձնատների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.5%-ով, ընդ որում մյուս մարզերում միասին վերցրած՝ 6.4%-ով, իսկ Երևանում 5.4%-ով աճել է:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. օգոստոսին անհատական բնակելի տների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003 թ. օգոստոսին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		օգոստոս 2003թ.	հուլիս 2003թ.	օգոստոս 2002թ.
Կենտրոն	255.0-970.0	398.0	391.0	288.0
Արաբկիր	205.0-550.0	297.0	286.0	181.5
Քանաքեռ-Զեյթուն	140.0-330.0	184.0	178.4	114.0
Նորք-Մարաշ	120.0-240.0	295.0	294.0	242.0
Ավան	125.0-190.0	141.0	133.0	112.0
Էրեբունի	130.0-300.0	153.0	147.0	108.5
Շենգավիթ	120.0-250.0	152.0	146.0	110.0
Դավթաշեն	140.0-250.0	180.0	172.0	107.0
Աջափնյակ	125.0-220.0	158.0	147.0	101.0
Մալաթիա-Սեբաստիա	125.0-240.0	148.0	145.0	105.0
Նուբարաշեն	65.0-100.0	71.5	70.0	50.0
Միջինը Երևանում	65.0-970.0	198.0	191.8	138.1

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. օգոստոսին առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները հուլիսի համեմատ աճել են 3.2%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ՝ 43.4%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. օգոստոսին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			օգոստոս 2003թ.	հուլիս 2003թ.	օգոստոս 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	82.6	82.5	78.5
	Ապարան	20.0-55.0	38.8	38.8	35.3
	Թալին	15.0-40.0	28.1	28.1	23.8
Արարատ	Արտաշատ	28.0-85.0	61.7	61.6	57.9
	Մասիս	27.0-88.0	62.4	62.4	59.0
	Վեդի	25.0-60.0	36.3	36.3	34.5
	Արարատ	25.0-60.0	37.4	37.4	34.5
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	89.4	89.3	76.3
	Արմավիր	35.0-90.0	52.2	52.2	47.5
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	36.4	36.4	34.6
	Գավառ	25.0-65.0	39.9	39.8	37.5
	Մարտունի	20.0-55.0	33.8	33.7	31.9
	Վարդենիս	15.0-45.0	21.3	21.2	19.1
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	68.5	68.3	63.9
	Ստեփանավան	20.0-50.0	33.5	33.5	31.8
	Սպիտակ	17.0-50.0	24.1	24.1	22.5
	Ալավերդի	18.0-50.0	25.8	25.8	24.5
	Տաշիր	15.0-30.0	19.9	19.8	18.6
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	92.2	92.2	87.0
	Նոր Հաճն	35.0-80.0	54.2	54.2	51.2
	Բյուրեղավան	15.0-50.0	38.2	38.1	34.5
	Եղվարդ	23.0-70.0	47.2	47.1	43.1
	Հրազդան	25.0-65.0	39.9	39.8	37.1
	Ծաղկաձոր	45.0-110.0	85.1	84.9	83.4
	Չարենցավան	25.0-50.0	33.3	33.3	31.8
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	90.7	90.6	85.4
	Արթիկ	18.0-55.0	28.6	28.6	25.3
	Մարալիկ	15.0-45.0	23.9	23.9	22.5
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.5	31.5	28.0
	Կապան	25.0-55.0	31.0	30.9	28.0
	Միսիան	18.0-50.0	28.6	28.5	25.6
	Մեղրի	18.0-40.0	28.2	28.1	23.5
	Քաջարան	15.0-30.0	19.2	19.2	16.7
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.9	36.9	33.6
	Եղեգնաձոր	20.0-65.0	49.1	49.1	46.6

	Ձերմուկ	25.0-60.0	43.2	43.2	39.2
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.1	39.1	36.7
	Իջևան	30.0-70.0	41.2	41.1	39.5
	Բերդ	20.0-50.0	30.8	30.8	28.2
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.7	30.7	27.8

2003թ. օգոստոսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները հուլիսի համեմատ աճել են 0.1%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ՝ 8.0%-ով:

2003թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են հողերի օտարման 457 գործարքներ /193.90 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում Երևան քաղաքում՝ 8.74 հա/: Հողի օտարման 164 գործարքներն /165.85 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 446-ը հանդիսացել են առուվաճառքի, 7-ը՝ նվիրատվության և 4-ը՝ փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 13 գործարքներում որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձինք:

2003թ. օգոստոսին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 45.3%-ով, իսկ 2003թ. հուլիսի համեմատ՝ նվազել է 16.0%-ով: 2003թ. օգոստոսին պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ առուվաճառքից 71-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 19-ը՝ /2.04 հա/ Երևանում, իսկ 52-ը՝ /58.67 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 5 միավորը /53.46 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական, 63-ը՝ /6.18 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 3-ը՝ /1.07 հա/ հասարակական կառուցապատման:

Ստորև ներկայացվել է 2003թ. օգոստոսին մարզերում հողերի նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	22	1.43	11	2.18	0	0.00	59	3.40	17	1.53
Արագածոտն	5	53.46	28	3.36	0	0.00	14	10.60	13	1.35	0	0.00
Արարատ	0	0.00	8	0.80	0	0.00	51	16.93	25	2.16	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	40	48.85	19	1.63	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.13	1	1.31
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	12	6.80	2	0.36	3	0.42
Կոտայք	0	0.00	10	0.80	0	0.00	25	9.27	53	4.41	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	8	9.37	7	0.23	2	0.12
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	2	5.22	0	0.00	1	0.40
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	2	0.45	2	0.80	0	0.00	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.04	0	0.00
Ընդամենը	5	53.46	68	6.39	13	2.63	154	107.84	180	13.71	24	3.78

2003թ. օգոստոսին Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում վաճառվել են 1 ական միավոր՝ համապատասխանաբար 1.0 և 0.07 հա արդյունաբերական օբյեկտների հողեր:

2003թ. օգոստոսին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 159 գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 5 և դատարանի վճռով 1 /վերջինս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չէ/, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	53.46	130.0	205.0	190.0	13	4.56	840.0	7600.0	2312.0
Ապարան								130.0	500.0	290.0
Թալին								200.0	1680.0	355.0
Ծաղկահովիտ						1	6.04	170.0	2100.0	302.0
Արարատի մարզ										
Արտաշատ						28	7.43	1040.0	6060.0	2015.0
Մասիս						11	3.55	400.0	3100.0	1048.0
Վեդի						12	5.96	680.0	7200.0	1188.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						7	4.91	650.0	4650.0	1237.0
Բաղրամյան						14	32.23	130.0	1000.0	414.0
Վաղարշապատ						18	11.31	980.0	11150.0	2110.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	475.0
Սևան								100.0	1000.0	406.0
Վարդենիս								60.0	1180.0	230.0
Լոռու մարզ										
Այվերդի						5	2.56	360.0	5500.0	840.0
Գուգարք								500.0	6000.0	1250.0
Սպիտակ						1	0.54	500.0	3300.0	1100.0
Ստեփանավան						6	3.70	180.0	4000.0	335.0
Տաշիր								100.0	400.0	240.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						14	2.59	520.0	10100.0	4800.0
Եղվարդ						4	1.71	380.0	6100.0	2470.0
Հրազդան						7	4.97	250.0	4000.0	770.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	7.11	550.0	760.0	631.0
Ամասիա								80.0	525.0	190.0
Անի						1	2.26	240.0	800.0	296.0
Աշոցք								60.0	210.0	130.0

Արթիկ								140.0	800.0	260.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի						1	0.22	400.0	4240.0	858.0
Սիսիան						1	5.00	90.0	1500.0	297.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	0.80	260.0	4000.0	1085.0
Վայք								120.0	3400.0	380.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	2000.0	460.0
Իջևան								530.0	4000.0	1050.0
Նոյեմբերյան								100.0	8340.0	700.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2003թ. օգոստոսին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 167 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 46, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Մեծագույն	Միջին			Նվազագույն	Մեծագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	28	33600.0	64.0	64.0	64.0	12	12470.0	120.0	3800.0	2241.0
Ապարան						1	1000.0	120.0	670.0	310.0
Թալին								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	8	8000.0	1060.0	1060.0	1060.0	5	5130.0	175.0	2460.0	650.0
Մասիս						18	14850.0	270.0	3680.0	810.0
Վեդի						2	1660.0	115.0	1000.0	495.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						7	8067.0	180.0	2440.0	685.0
Բաղրամյան						1	1200.0	120.0	280.0	200.0
Վաղարշապատ						11	6985.0	280.0	3700.0	1280.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1300.0	180.0	1000.0	520.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
Մարտունի								120.0	320.0	225.0
Սևան								120.0	1000.0	225.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	900.0	78.0	440.0	200.0
Գուգարք								78.0	3800.0	630.0
Սպիտակ								78.0	450.0	160.0

Ստեփանավան						1	2680.0	78.0	340.0	140.0
Տաշիր								78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Արովյան	10	8000.0	27.0	124.0	53.0	34	28752.0	180.0	4300.0	1460.0
Եղվարդ						16	14118.0	180.0	3670.0	1940.0
Հրազդան						3	1210.0	180.0	4120.0	1310.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	2317.4	120.0	2500.0	395.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի								120.0	430.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս								78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	410.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Միսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր								78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան						1	400.0	78.0	1600.0	450.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0

Պետք է նշել, որ 2003թ. օգոստոսին հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ՝ 4.64 հա ընդհանուր մակերեսով: Ընդ որում 7 գործարքները գրանցվել են Արարատի /1.50 հա/, 1-ը՝ Գեղարքունիքի /0.88 հա/ և 1-ը՝ Շիրակի /2.26 հա/ մարզերում:

2003թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 462 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 35.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 1.1%-ով, իսկ 2003թ. հուլիսի համեմատ՝ 17.9%-ով:

2003թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 33 բնակարանների, 13 բնակելի տների, 126 հասարակական, 8 արտադրական նշանակության օբյեկտների, 281 հողերի և 1ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2003թ. օգոստոսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 31 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. օգոստոսի համեմատ, նվազել են 50.8%-ով, իսկ 2003թ. հուլիսի համեմատ՝ 49.2%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. օգոստոսին հանրապետությունում վարձակալվել են 1174.61 հա ընդհանուր մակերեսով հողեր /1.86հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 1104.70 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 53.97 հա բնակավայրերի, 14.08 հա արդյունաբերական օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 442.68 հա, որից 420.69 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ Վայոց Ձորի մարզում 3.23 հա, որից 3.10 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 104.47 հա հողեր, որից 0.55 հա հանդիսացել են բնակավայրի հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. օգոստոսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	10	420.69
Արարատ	0	0.00	22	36.92
Արմավիր	0	0.00	5	13.21
Գեղարքունիք	0	0.00	10	27.50
Լոռի	0	0.00	8	6.77
Կոտայք	0	0.00	30	42.43
Շիրակ	0	0.00	41	363.75
Սյունիք	5	103.92	14	36.42
Վայոց Ձոր	0	0.00	3	3.10
Տավուշ	0	0.00	8	50.00
Ընդամենը	5	103.92	151	1000.79

2003թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 297 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2003թ. հուլիսի համեմատ, նվազել է 22.9%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ՝ աճել է 23.8%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 53.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /25.9%/, առանձնատների /11.8%/ և հողերի /4.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 187 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2002թ. օգոստոսի համեմատ, աճել է 6.3%-ով, իսկ 2003թ. հուլիսի համեմատ՝ նվազել է 17.3%-ով:

2003թ. օգոստոսին հանրապետությունում գրավադրվել են 10.27 հա /0.02հա Երևանում/ մակերեսով հողեր , որից 10.25 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 8.51 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ Երևանում՝ 0.02 հա բնակավայրերի հողեր:

2003թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 20 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4 %:

2003թ. հուլիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 9.1%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 50.0%-ով: 2003թ. օգոստոսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 41.7% :

2003թ. օգոստոսին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 923 գործարքներ, որոնց քանակը 2003թ. հուլիսի համեմատ նվազել է 4.6%-ով, իսկ 2002թ. օգոստոսի համեմատ աճել՝ 56.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.4%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /48.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն